


ա ուր և զայտ վեհ մայր է սպառքոց  
առարկ մե մօնու դր մաս թ և դրամանցոց  
առ և տիրու դաշտ գլուխունն է



## ԿՐՈՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԸՆԴԵՒՔԻՐԱԿԱՆ ԵՒ ԽԵՐՈՅԵԿԱՆ

ԹԻՒ ԺԲ. — ԾՐՁԱՆ Ե.

1872

ՏԱՐԻ Ե. — ԴԵԿԱՏԵՄԵՐ 31

### Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՅԱԴԱԳԱՍՏ ԹԻՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՎԵՐԴԻ  
ՊԵՏԾԱՄՄՈՒՆՔ ԿՐՈՅԻ.

Հաւատք առանց գործոց մեռեալ է:

Եթէ գործքն են արդարեւ մարդոց սըր-  
տին՝ հաւատոյ և զգացմանց արտայայ-  
տիչք կամ հաւատոտիք, ինչպէս մասց  
խորհածը՝ սրտի ըղձացածը և կամաց  
հրամայածը կարտայայտուի՝ կամ կըդոր-  
ծադրուի լիզուով, աչօք, ձեռօք, ոտիւք  
և լն. զգայարանքներով, ոչ ապաքէն կրօ-  
նի մէջ ևս հոգւոյն առ Աստուած սէրը՝  
ջերմեռանդութիւնը և իղձերը նոյնպէս  
գործովք՝ այս ինքն՝ արդարին պաշտա-  
մանը պէտք է զի արտայայտուին:

Երգարեւ մարդոց հոգւոյն բաղձայածը  
սրտով պիտի կատարուի, կամ պարզա-  
պէս՝ կըօնին առ Աստուած սրտի մէջ պի-

տի տարածուի և տիրէ, սակայն՝ մտածե-  
լով որ՝ մարդս ի հոգւոյ և ի մարմնոյ  
բաղկացած մի էակ է, պէտք է խոստովա-  
նիլ՝ զի անկարելի է հոգւոյն առանց գոր-  
ծակցութեան մարմնոյ ընծայուիլ Աս-  
տուծոյ, այս ինքն առանց արարողութեանց,  
ձիսից կամ՝ արդարին ներդաշնութեանց:

Աշակերտիւն առն և առն թէ ի՞նչ-  
պէս:

Ասայի վիրեւ, թէ ճարդու է հոգւոյ և  
ճարժանոյ բաղկացած մէ էակ է:

Առանց հոգւոյ՝ մարմնն է մի զիակ,  
և առանց մարմնոյ՝ հոգին՝ բաժանեալ  
մի հոգի է:

Պէտք է երկուքն ի միասին առնուլ,  
որպէս զի մարդ կազմուի \*):

Աւրեմն այս միաւորութեան զօրու-  
թեամբ ի՞նչպէս կգործէ մարդ: —

(\*) Պիւրիմ. պատ. եր. 51:

Կամ հոգին հետևելով մարմնոյ, կամ մարմինն հնազանդելով հոգւոյ, և կամ երկուքն իմիասին համաձայն պիտի գործեն:

Ուստի կարող է ամեն ոք փորձել յանձին իւրում, և պիտի տեսնէ: թէ կարելի է հոգւոյն կամ սրտին զգացմունքը արտաքուստ ևս շուտով չ յայտնուի:

Եպաքէն երկիւղը և ահը որոյ և իցէ սիրոք պաշարելէն անմիջապէս յետոյ՝ երեսը կդունատուի, ներքին ինչուրախութիւնը կդրդէ արտաքուստ կայտուալ՝ ինչպէս և երեսը ժպիտներով լի կներկայանայ, բարկութիւնն՝ աշքերը կխոժոռեցնէ, մազերը և յօնքերը կըրցէ, միանգամայն կդողացնէ ամբողջ մարմինը, սէրն շատ հեռուէն կցայտէ և կցօրայ երեսի վերայ, այնպէս որ՝ եթէ չափազանց ջանք լինի այս զգացմունքներէն մինը քօղարկել կամ կեղծել, անմիջապէս ներքին յուղմունքն կամ այլայլութիւնն անշնչառ կը նկարագրի յերեսն և կմատնէ:

Ուրեմն կհետեի, թէ՝ այսպիսի վիճակի մէջ մարմինն և հոգին մի այնպիսի փոխագարձ սերտ յարարերութիւն և կապակցութիւն ունին ընդ միմեանս, և այնպէս միաբան կընթանան և ի միմեանց կախումն կլրեն, զի անհնարին է հասարակաց միաբան գործողութիւն չունենալ:

Երդ եթէ այս ապացուցուի մարդոյ ամենայն գործոց մէջ, ուրեմն մի և նոյն չէ ասել՝ նա և կրօնական ներգործութեանց մէջ: Կ՞նչ, մի՞թէ երկրաւոր գործոց համար մի տեսակ բնութիւն, և երկնաւոր բաներու համար մի այլ տեսակ բնութիւն ունենալ պէտք և արժան է:

Թռող ենթադրուի, զի գուցէ կարելի լինի՝ որ մարդ որդի մէջ միայն իրոն ամ-

բողջապէս ի գործ դնէ: Բայց և այս ապօրինաւոր է: Վասն զի կրօնն մի պարագէ և և կվերաբերի բոլոր մարդկութեան կամ մի ընկերութեան՝ և ոչ թէ միում անհատի:

Օրինակ չէ պէտք մի թագաւորի այցելութեան երթալը իւր իշխած երկրին, ուստի բնակչաց և հպատակաց ոչ թէ առանձին առանձին՝ այլ համանգամայն հրապարակական ցոյցերով իւրեանց զգացմանց հաւաստիքը յայտնելները, այլ սակայն կասեմ, զի Վստուած՝ գոլով ստեղծիչը և տէր ամենայն արարածոց և տիեզերաց, ունի իրաւունք բովանդակ մարդիկներէն ճանաչուիլ և պաշտուիլ կրօնիներգործութեամբք, իսկ այս անշնչառ առանց արտաքին գործողութեանց և հրապարակական պաշտամանց կարելի չէ կատարուիլ մանաւանդ զի մարդիկ չեն հրեշտակք, որ ի միասին հաւաքուին մտաց գործողութեամբք, և առանց զգայալանաց գործակցութեանց իմանան զերեար. թռող և զայն՝ որ ամեն կրօն ունի իւր պարտիքը, և ով որ մի կրօն կդաւանի, ի հարկէ նաընկերութեան առջև յանձն կառնու կատարել նոյն կրօնի պարտիքը:

Ըստ այսմ՝ մարդ մշտնջենաւորապէս կախումն ունի յՎստուածոյ, և ինչպէս նորա ձեռաց ստեղծուած՝ առաւել ևս յաւէտ կարօտ առ նա: Իսկ փոխարէն մի պարագ պէտք չէ ունենայ առ նա, այս ինքն յաւէտ երախտագէտ զգացմամբք օրհնել զնա և մեծարել, և միանգամայն մաղթել՝ որ միշտ իւր խնամոց ներքեւ պահէ:

Կարելի է դարձեալ ենթադրել՝ զի Վստուած կարօտ չէ մարդոյ մեծարանաց

և պաշտամանց, որ նորա անհուն և ամենակարող լութեան առջև քանի խեղճ և պակասաւոր բաներ կարեն լինել: Եւթէ նա արդէն իւր սքանչելի ստեղծագործութեամբք կը փառաւորուի և իւր պատկառելի մեծարանք կներկայացնէ մարդոյ կամ մարդկան:

Իսայց ոչ արդեօք նոյն իսկ սքանչելագործութիւնք անդամ մարդոյս օրինակ և յորդոր կտան փութալ և բորբոքուիլ յաւետ զգալ, գիտել և երախտագէտ լինել Աստուածային բարերարութիւններէն: Ո՞չ ապաքէն մարդ միշտ կկարօտի Աստուածային խնամոց և ողորմութեանց, ուստի գոհութեամբք պարտաւոր է օրհնել Տէրը, խնդրել՝ որ միշտ հսկէ իւր վերայ և խնամէ, և աղաչել՝ որ ընդունի իւր աղաչանեցները և երախտագէտ զգացմանց փառաբանութիւնքը, և այս միթէ մեօծ բան է նորա անչափ խնամոց, սիրոյ, անզին շնորհաց և առատաձեռնութեանց ի գոխարէն:

Մանաւանդ զի Աստուած կը հրամայէ մարդկան պաշտել զինքն, բայց ոչ առանց արտաքին գործողութեանց կամ պաշտամանց՝ արարողութեանց և ծիսից:

Յիշէ Երէլի, Կոյի, Երբահամու և այլոց լոհագործութիւնքը:

Յիշէ Պետական քահանայագործութիւնքը և հին ուխտին Տապանակը:

Յիշէ, զի եթէ Աստուածոյ անընդունելի և անհաճոյ էր կրօնական պաշտամունքները, ընդէլ ուրեմն աշխարհի Փրկիչը Յիսուս Քրիստոս եկաւ և հաստատեց զայնս աշխարհի վերայ, և զթիրին հնոյն լցուցանելով սփուեց ընդ ամենայն տիեզերս իձեռն Առաքելոց քարողութեանն:

Յիշէ վերջապէս, և եթէ հաւատաս Փրկչի Մարգեղութեան տնօրէնութեանց և փրկարար Խորհրդոց, ուրեմն գործովք պիտի ապացուցանես զայնս հանդերձ սըրտեռանգն ջերմեռանդութեամբք և առանձնական և հրապարակական արտաքին պաշտամամբք և արարողութեամբք, որովք հոգին յարաժամ հաւատոյ աչաց ընդառաջ պատկերացուցանելով Աստուածութեան անհուն խորհուլողները, երախտիքները և անթիւ և այլ և այլ բարերար և շնորհական տնօրէնութիւնքը, և ոգևորուած և յափշտակուած առ Աստուած՝ միշտ կհետեւի զբարիս սիրել, և բարի գործեր և այլոց նախանձելի օրինակներ հանդիսացնել, որով Աստուածոյ անունը յաւետ և հանապազ մեծաւ և խորին իմն պատկառանօք պաշտելի և երկրպագելի կիայլի յընդհանուրս, և առաքինութեանց քաղցը և անձկալի պըտուղները բազմաբեղուն և փառաւորապէս սփուելով կպահծան խմարդիկ:

Պ ա հ ր ա մ Պ ա ր դ ա ո լ ե պ

Մ ա ն կ ո ւ ն ի.

Պ Ա Ս Մ Ա Կ Ա Ն

Թէ ՈՒՄ ԵՆ ԱՒԱՐԻՑ ԵՒ ՏՎՈՒՏ.

(ԺԱ ԲԱ-Ը ՀԱ-ԴՐԱ-Դ)

Խօյի հարաւ — արևմտեան կողմումն է Անձախոյ կամ Անձահոյ ձորն, որի մէջն է Կօտոլ, այս նոքն Առտոր բերզն կամ զիւղն, և նրա մօտովն է անցինում Խօյի պարզ և վճիտ զետն, որ բերզի կամ զիւղի անունն է վեր առած էս զետի